

Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ



Աղջիկը, որ երկու անգամ ապրեցաւ



Written by: Edward Hughes

Illustrated by: Janie Forest

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

Adapted by: Ruth Klassen

Story 49 of 60

www.M1914.org

Bible for Children, PO Box 3, Winnipeg, MB R3C 2G1 Canada

License: You have the right to copy or print this story, as long as you do not sell it.

Հայերէն

Armenian

Ճայրոս հրեայ եկեղեցական առաջնորդ մըն էր,
որ Աստուծոյ կը պաշտեր եւ Աստուծոյ խօսքը
կը սորվեցներ ուրիշներուն:
Օրին մէկը մեծ փորձանք
մը եկաւ Ճայրոսի: Իր
ամենասիրելի աղջիկը,
միայն տասներկու
տարեկան,
հիւանդացաւ:



1

Այնպէս կերուեր, թէ որեւէ
մէկը չի կրնար օգնել անոր:
Շատ ծանր հիւանդութիւն
էր: Ճայրոս գիտեր,
որ իր աղջիկը
կը մեռներ:



2

Միայն մէկ անձ կրնայ օգնել ճայրոսի աղջկը: Ճայրոս փնտռտուքի ելաւ Յիսուսին, որպէսզի իր տունը բերժ գիկը:



3

Ճայրոս թերեւս գիտեր, որ իր եկեղեցիի մարդիկը չեն հաւատար Յիսուսի:



4

Սակայն ճայրոս հոգ չեր ըներ: Ան պետք ուներ արագ օգնութեան, որպէսզի իր աղջկը չսեռներ:




5

Ճայրոս գտաւ Յիսուսը հոժ բազութեամբ պաշարուած: Ան ծուկի եկաւ Յիսուսի ոտքերուն առջեւ:



6

"Իմ փոքրիկ աղջիկս մահուան սեմին է", յուսահատ աղաչեց մարդը:



7

"Եկուր եւ ձեռքերդ վրան դիր, որպէսզի առողջանայ եւ ան ապրի":




8




Յիսուս գնաց Ճայրոսի
հետ: Սակայն արագ
չէին կրնար շարժիլ հոծ
բազմութեան պատճառով:
Կին մը տասներկու երկար
տարիներ հիւանդ էր:
Ան այցելած էր բոլոր
բժիշկներուն (եւ սպառած
իր բոլոր դրամը) առանց
որեւէ օգնութեան: Օ՛հ,
որքան կ'ուզէր Յիսուսը
տեսնել:

9



Ի՞նչ կրնար ընել կինը: "Եթէ
միայն կրնամ դպչիլ իր հագուստին, ես
պիտի առողջանամ", կինը մրմռաց: Ան
կամաց մը գնաց Յիսուսին ուղղութեամբ:
Ետքը իր ձեռքը երկարելով
դպչեցաւ Յիսուսի վերարկուին:

10



Հրաշք մը: Հրաշք մը:
Կինը առողջացաւ:
Անմիջապէս եւ
ամբողջապէս: Ան
գիտեր, որ
առողջացաւ եւ
ամբողջութեամբ:
Բայց յետոյ ձայն մը
խօսեցաւ.

11




"Ո՛վ դպաւ ինձի",
Յիսուս հարցուց.
Բազմութիւններ կը
դպչէին անոր: Բայց
կինը, որ առողջացաւ
գիտեր, որ Յիսուս
կ'ուզէր, որ կինը ըսէ,
թէ ինք առողջացաւ:
Ամէկոտութեամբ, կինը
Յիսուսի պատմեց
բոլոր պատմութիւնը:

12



Ճիշդ այդ ատեն
Ճայրոսի ծառաները
հասան տունէն: Իրենց
երեսներուն վրայ
յայտնի էր: Յաւալի
ըսին Ճայրոսի: Մեռաւ:
Շատ ուշ էր: Թերեւս
եթէ կինը չ'ուշացներ...
թերեւս, եթէ... Մեռաւ:
Ճայրոսի թանկագին
աղջիկը գնաց:

13



Երբ Յիսուս իմացաւ,
ան պատասխանեց.
"Մի վախնար, միայն
հաւատայ, եւ ինք լաւ
պիտի ըլլայ": Ի՞նչ
դժուար պիտի ըլլար
Ճայրոսին, որպէսզի
հաւատայ Յիսուսին:
Իր աղջիկը մեռած էր:

14

Տունը, ամեն մարդ կու լար եւ կը ողբար աղջկան:
 "Ան մեռած չէ, սակայն կը քնանայ", ըսաւ Յիսուս
 անոնց: Անոնք իր վրայ խնդացին: Անոնք գիտէին,
 որ աղջիկը մեռած էր:



15

Յիսուս ամենուն դուրս դրաւ, առաւ աղջկան ձեռքը
 եւ ըսաւ. "Փորրիկ աղջիկ, ելի՛ր": Ճայրոս հոն էր: Իր
 կինն ալ հոն էր: Յիսուսի
 երեք աշակերտներն ալ
 հոն էին: Ամենքն ալ
 լսեցին Յիսուսին
 բառերը: Կրնա՞ր
 ըլլալ, որ պզտիկ
 աղջիկն ալ
 լսեց:



16

Մեռած աղջիկն
 ալ լսեց Յիսուսի
 հրամանը:
 Անոր հոգին
 վերադարձաւ,
 եւ ան
 անմիջապէս
 ոտքի ելաւ:
 Յիսուս
 անոր
 վերցուց
 մեռելներէն:



17

Աղջկան ծնողքը ապշած էր: Յիսուս աղջկան
 ուտելիք տուաւ, որ ուտէ: Ի՛նչ ուրախ պետք էր
 զգային, որքան շնորհակալ Յիսուսին: Իր հրաշալի
 սիրոյ եւ ուժին, որ իրենց աղջիկը վերադարձուց
 մեռելներէն:



18

Աղջիկը, որ երկու անգամ ապրեցաւ

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
 Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Մարկոս 5, Դուկաս 8

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
 Սաղմոս 119:130

Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք
 մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած
 այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց,
 որպէսզի հաշին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար
 պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը
 բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը
 պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար,
 Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ
 դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր
 Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինծի համար
 եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ
 կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր
 կեանք մը ապրիլ, եւ օր մը հետո՞ղ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինծի
 որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
 Յովհաննու 3:16

